ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

# *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

22-ը դեկտեմբերի 2021 թվականի N 97 Ա

## *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ԹԻՎ 9 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով,

**ավագանին որոշում է՝**

1.Հաստատել 22-ը դեկտեմբերի 2021թ. թիվ 9 հերթական նիստի օրակարգը հետևյալ հարցերով՝

2.Եղեգիս համայնքի 2022 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին,

3.Եղեգիս համայնքի 2022թ. տարեկան բյուջեի նախագծի քննարկման մասին,

4.Եղեգիս համայնքի մի խումբ բնակիչների ֆինանսական օգնություն ցուցաբերելու մասին,

5.Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի 2022 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին,

6.Եղեգիս համայնքի ավագանու 14/10/2021թ. թիվ 89Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին,

7.«Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամ»-ի՝ արջերի կողմից հասցված վնասի փոխհատուցման ենթակա անձանց անվանացանկը հաստատելու մասին,

8.29-ը հունվարի 2021թվականի «Եղեգիս համայնքի 2021 թվականի տարեկան բյուջեն հաստատելու մասին» թիվ 02Ն որոշման մեջ վերաբաշխում կատարելու մասին,

9.Եղեգիս համայնքի Հերմոն բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին,

10.Եղեգիս համայնքի Վարդահովիտ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողի նպատակային նշանակությունը փոխելու մասին,

11.Եղեգիս համայնքի Արտաբույնք բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 0,06 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների

հողեր, գործառնական նշանակությունը գյուղատնտեսական արտադրական օբյեկտների աճուրդային կարգով օտարելու մասին,

12.Եղեգիս համայնքի Եղեգիս բնակավայրի վարչական սահմաններում գտնվող քաղաքացու սեփականություն հանդիսացող հողի նպատակային նշանակությունը փոխելու մասին,

13.Եղեգիս համայնքի ավագանու 14/10/2021թ. թիվ 92Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին,

14.Եղեգիս համայնքի գույքագրման ցուցակներում լրացումներ կատարելու մասին,

15.Եղեգիս համայնքի Հերմոն բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողատեսքերից «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր ՊՈԱԿ-ին համայնքի սեփականության իրավունքը անհատույց փոխանցելու մասին:

Կողմ՝ 6 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Բադալյան Նվեր բացակա

Գևորգյան Արման բացակա

Հարությունյան Աշոտ բացակա

Հովհաննիսյան Ռուբիկ բացակա

Մարկոսյան Ռազմիկ

Մարտիրոսյան Զոյա

Մարտիրոսյան Նորայր

Մելիքսեթյան Վարդան

Մելքոնյան Արմենակ

Վարդանյան Մխիթար

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

22-ը դեկտեմբերի 2021 թվականի N 98 Ա

## ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.1)-րդ կետի և 82.1.-րդ հոդվածի պահանջներով, ***ավագանին որոշում է՝***

Հաստատել Եղեգիս համայնքի 2022 թվականի տարեկան աշխատանքային պլանը՝ համաձայն սույն որոշման կից հավելվածի:

Կողմ՝ 6 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Բադալյան Նվեր կողմ

Գևորգյան Արման կողմ

Հարությունյան Աշոտ կողմ

Հովհաննիսյան Ռուբիկ կողմ

Մարկոսյան Ռազմիկ

Մարտիրոսյան Զոյա

Մարտիրոսյան Նորայր

Մելիքսեթյան Վարդան

Մելքոնյան Արմենակ

Վարդանյան Մխիթար

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

22-ը դեկտեմբերի 2021 թվականի N 99 Ա

## ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի պահանջներով, ***ավագանին որոշում է՝***

Հաստատել Եղեգիս համայնքի 2022 թվականի տարեկան բյուջեի նախագիծը՝ համաձայն սույն որոշման կից հավելվածի:

Կողմ՝ 6 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Բադալյան Նվեր բացակա
Գևորգյան Արման բացակա
Հարությունյան Աշոտ բացակա
Հովհաննիսյան Ռուբիկ բացակա
Մարկոսյան Ռազմիկ
Մարտիրոսյան Զոյա
Մարտիրոսյան Նորայր
Մելիքսեթյան Վարդան
Մելքոնյան Արմենակ
Վարդանյան Մխիթար

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Հավելված
22-ը դեկտեմբերի 2021թ.
N 99Ա ավագանու որոշման

**Համայնքի բյուջեի եկամտային մաս.**

**Հատված 1 284674.2 հազ. դրամ** որից՝

Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար 9800.0 հազ. դրամ,

Գույքահարկ փոխադրամիջոցների համար՝ 26 000.0 հազ. դրամ,

Գույքահարկ շենքերից և շինություններից՝ 200.0 հազ. դրամ

Տեղական տուրքեր՝ 1000.0 հազ. դրամ,

Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիա՝ 216374.2 հազ. դրամ

Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարներ՝ 12 800.0 հազ. դրամ

Տեղական վճարներ՝ 10 500.0 հազ. դրամ

Այլ եկամուտներ՝ 8000.0 հազ.դրամ

**Համայնքի բյուջեի ծախսային մաս՝ 284 674.2 հազ. դրամ/Հատված 2/**

**01.1.1- օրենսդիր եւ գործադիր մարմինների պետական կառավարում՝ 127 870.0 դրամ, /Հատված 2/** այդ թվում՝

-Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ 4111-107 000.0 հազ. դրամ
-Գործառնական և բանկային ծառայությունների ծախսեր 4211 -500.0 հազ. դրամ
-Էներգետիկ ծառայություններ 4212-4000.0 հազ. դրամ
-Կապի ծառայություններ 4214-2000.0 հազ. դրամ
-Ապահովագրական ծախսեր 4215-500.0 հազ. դրամ
-Ներքին գործուղումներ 4221-800.0 հազ. դրամ
-Աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայություններ-4233-500.0 հազ.դրամ

-Տեղակատվական ծառայություններ 4234-400.0 հազ. դրամ
-Ներկայացուցչական ծախսեր 4237-300.0 դրամ
-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ 4239 – 500.0 հազ. դրամ,
-Մասնագիտական ծառայություններ 4241- 800.0 հազ. դրամ,
-Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում 4251-950.0 հազ. դրամ
-Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում 4252-980.0 հազ. դրամ
-Գրասենյակային նյութեր և հագուստ 4261-980.0 հազ. դրամ
-Տրանսպորտային նյութեր 4264-1000.0 հազ. դրամ
-Առողջապահական և լաբորասոր նյութեր 4266-300.0 հազ.դրամ
-Կենցաղային և հանրային սննդի նյութեր 4267-800.0 հազ. դրամ
-Հատուկ նպատակային այլ նյութեր 4269-980.0 հազ. դրամ
-Պարտադիր վճարներ 4823- 1000.0 հազ.դրամ
-Տրանսպորտային սարքավորումներ 5121-800.0 հազ.դրամ
- Վարչական սարքավորումներ 5122-1980.0 հազ. դրամ,
-Այլ մեքենաներ և սարքավորումներ 5129-800.0 հազ դրամ

**01.3.3- Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ 600.0 հազ. դրամ /Հատված 2/**

-Համակարգչային ծառայություններ 4232-600.0 հազ. դրամ

**01.6.1- Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ -20500.0 հազ դրամ/Հատված 2/**

-ընդհանուր բնույթի այլ ծառայություններ 4239 -2500.0 հազ. Դրամ

-Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին 4637-17000.0 հազ.դրամ

-Այլ մեքենաներ և սարքավորումներ 5129-1000.0 հազ դրամ

**02.2.1 Քաղաքացիական Պաշտպանություն-2300.0 հազ. դրամ**

-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ 4239 – 300.0 հազ. դրամ,

-Տրանսպորտային նյութեր 4264-500.0 հազ. Դրամ

-Հատուկ նպատակային այլ նյութեր 4269-500.0 հազ. Դրամ

-Այլ մեքենաներ և սարքավորումներ 5129-1000.0 հազ դրամ

**04.2.1- Գյուղատնտեսություն-2100.0 հազ. դրամ /Հատված 2/**

-Մասնագիտական ծառայություններ 4241 – 600.0 հազ. Դրամ

-Հատուկ նպատակային այլ նյութեր 4269-500.0 հազ. Դրամ

-Այլ կապիտալ դրամաշնորհներ 4657-1000,0 հազ.դրամ

**04.2.4 -Ոռոգում –27980 .0 հազ. դրամ /Հատված 2/**

-Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում 4251-980.0 հազ. դրամ

-Հատուկ նպատակային այլ նյութեր 4269-1000.0 հազ. Դրամ

-Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին 4637-1000.0 հազ.դրամ

-Շենքերի և շինությունների շինարարություն 5112- 23000.0 հազ. դրամ

--նախագծահետազոտական ծախսեր 5134- 2000.0 հազ դրամ

**04.5.1- Ճանապարհային տրանսպորտ -9450.0 հազ. դրամ/Հատված 2/**

-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ 4239 – 800.0 հազ. դրամ,

-Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում 4251-1750.0 հազ.դրամ

-Տրանսպորտային նյութեր 4264-1000.0 հազ. դրամ,

-Հատուկ նպատակային այլ նյութեր 4269-900.0 հազ. դրամ

-Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին 4637-5000.0 հազ.դրամ

**05.1.1- Աղբահանում – 10200.0 հազ.դրամ, /Հատված 2/**

-Կոմունալ ծառայություններ 4213 -10200.0հազ. դրամ

**05.6.1. -Շրջակա միջավայրի պաշտպանություն 400.0 հազ.դրամ/Հատված 2/**

-Մասնագիտական ծառայություններ 4241-400.0 հազ.դրամ

**06.3.1 -Ջրամատակարարում – 26330.0 հազ. դրամ /Հատված 2/**

-ընդհանուր բնույթի այլ ծառայություններ 4239-600 .0 հազ.դրամ

-Մասնագիտական ծառայություններ 4241-800.0 հազ. դրամ

-Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում 4251-950.0 հազ.դրամ

-Հատուկ նպատակային այլ նյութեր 4269-980.0 հազ.դրամ

-Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին 4637-1000.0 հազ.դրամ

-Շենքերի և շինությունների շինարարություն 5112- 20000.0հազ. դրամ

- նախագծահետազոտական ծախսեր -5134-2000.0 հազ. դրամ

**06.4.1- Փողոցների լուսավորում-25 600.0 հազ. դրամ/Հատված 2/**

-էներգետիկ ծառայություններ 4212-6000.0 հազ. դրամ

-ընդհանուր բնույթի այլ ծառայություններ 4239-800 .0 հազ.դրամ

-Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում 4251-900.0 հազ.դրամ

-Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին 4637-1000.0 հազ.դրամ
- Շենքերի և շինությունների շինարարություն 5112-14 000.0 հազ.
նախագծահետազոտական ծախսեր -5134-2000.0 հազ. դրամ

**08.2.4 -Այլ մշակութային կազմակերպություններ-3 900.0 հազ.դրամ /Հատված2/**

-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ 4239 -900 0 հազ. Դրամ
-Գրասենյակային նյութեր և հագուստ 4261-800.0 հազ. դրամ
- Հատուկ նպատակային այլ նյութեր 4269– 2200.0 հազ. դրամ

**10.4.1- Ընտանիքի անդամներ և զավակներ 2500.0 հազ. դրամ/Հատված 2/**

-Այլ նպաստներ 4729-2500.0.դրամ

**10.7.1- սոցիալական հատուկ արտոնություններ/այլ դասերին չպատկանող/ - 3 000.0 հազ. դրամ/Հատված 2/**

-Այլ նպաստներ բյուջեից 4729-2500.0 հազ. դրամ
-Հուղարկավորության նպաստներ բյուջեից 4726-500.0

**11.1.2 -Համայնքների պահուստային ֆոնդ** 21944.2 հազ.**դրամ**

-Պահուստային միջոցներ 4891—21944.2 հազ. դրամ

Համայնքի ղեկավար Ա.Ստեփանյան

## Ա. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՈՒՂԵՐՁԸ

### 1. Ի՞ՆՉ Է ԾՐԱԳՐԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՆ

Բյուջեն, լինելով համայնքի եկամուտների ձևավորման ու ծախսերի կատարման տարեկան ֆինանսական ծրագիր, ուղղված է ՏԻՄ-երին օրենքով վերապահված լիազորությունների շրջանակներում համայնքային ծրագրերի իրականացմանը:

Մեր կողմից 2022 թվականի բյուջեի ծրագրային ձևաչափի ընտրությունը ուղղված է ծախսերի կատարման արդյունավետության բարձրացմանը և վերջնական արդյունքների ստացմանը:

Ծրագրային բյուջեն ցույց է տալիս 2022 թվականի բյուջետային ծրագրերն իրականացնելիս, որոշակի ռեսուրսներ ներդնելու դեպքում արդյունքների ձեռք բերումը՝ միաժամանակ արմատավորելով նոր որակի ու մակարդակի կառավարում, ձևավորելով ներդրված ռեսուրսների և ստացված արդյունքների միջև ինտեգրացված կապ, ապահովելով բյուջետային ծրագրի միջոցառումների կատարման թափանցիկությունն ու վերահսկման արդյունավետ մեխանիզմը:

Ծրագրային բյուջետավորման գործընթացը հնարավորություն է տալիս համայնքի հնգամյա զարգացման ծրագրի (ՀՀԶԾ-ի) և տարեկան աշխատանքային պլանի (ՏԱՊ-ի) հիման վրա պլանավորել համայնքի ֆինանսական միջոցները, դրանք օգտագործել խնայողաբար, արդյունավետ և հրապարակային:

Կարևորելով մասնակցային գործընթացները տեղական ինքնակառավարման համակարգում՝ բյուջետավորման այս ձևաչափով ամրագրվում է հաշվետվողականությունը, շարունակականությունը, ծրագրերի առաջնահերթությունների հստակ սահմանումը, բյուջետավարման գործառույթների հստակ բաշխումը, չափելիությունը:

Որդեգրելով աշխատանքային նոր ռազմավարություն՝ համայնքի բյուջետավարումը դադարում է դիտարկվել որպես ֆինանսական պլանի կազմում ու կատարում, այլ առավել կարևորվում են բնակչությանը համայնքային որակյալ ծառայությունների մատուցումը և համայնքի խնդիրների աս տիճանական լուծումը:

### 2. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԶԵԿՈՒՅՑԸ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Համայնքի 2022թ. ծրագրային բյուջեն մշակվել է՝ հիմք ընդունելով Եղեգիս համայնքի 2017 - 2022 թթ. հնգամյա զարգացման ծրագիրը, ինչպես նաև 2022թ. տարեկան աշխատանքային պլանը:

Համայնքի գործունեության արդյունավետությունը կախված է բյուջետային գործընթացի ճիշտ կազմակերպումից, բյուջեի եկամուտների արդյունավետ հավաքագրումից և միջոցների նպատակային օգտագործումից:

Համայնքի 2022թ. բյուջետային քաղաքականության հիմնական ուղղություններն են՝

- Բարելավել համայնքի ֆինանսական վիճակը՝ ճշտելով հողի հարկի և գույքահարկի բազաները, բարձրացնելով սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը և նպատակային օգտագործելով բյուջետային միջոցները,
- Բարձրացնել ՏԻՄ-երի, համայնքի աշխատակազմի, համայնքային կազմակերպությունների և բնակիչների հետ աշխատանքի արդյունավետությունը,

- Իրականացնել համայնքի ֆինանսատնտեսական և հաշվապահական հաշվառման գործունեության արդյունավետ կազմակերպում՝ համադրելով ֆինանսական ծրագրերը,
- Բարձրացնել բնակչությանը և տնտեսվարող սուբյեկտներին մատուցվող համայնքային ծառայությունների և այլ լրացուցիչ ծառայությունների որակը,
- Իրականացնել կրթության, մշակույթի բնագավառների համայնքային ենթակառուցվածքների պահպանման, շահագործման, նորոգման, ջեռուցման համակարգերի վերականգնման, գույքային վերազինման և այլ աշխատանքները,
- Նպաստել համայնքի մշակութային, մարզական և հասարակական կյանքի աշխուժացմանը, երիտասարդության ազատ ժամանցի կազմակերպմանը,
- Նպաստել ինտենսիվ գյուղատնտեսության զարգացմանը, ներդնելով գյուղատնտեսական որակյալ ծառայությունների նոր համակարգ, աջակցելով ոլորտում նորագույն տեխնոլոգիաների ներդրմանը,
- Հնարավորինս աջակցել համայնքում ներդրումային ծրագրերի իրականացմանը:

Ես դիմում եմ համայնքի բնակիչներին, ավագանուն, աշխատակազմի և համայնքային կազմակերպությունների աշխատակիցներին՝ շահագրգիռ և սրտացավ մոտեցում ցուցաբերել համայնքի 2022թ. բյուջեի միջոցների գոյացման, դրանց նպատակային և հասցեական օգտագործման, բյուջեի կատարման և վերահսկման համար:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

22-ը դեկտեմբերի 2021 թվականի N 100 Ա

## ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻ ԽՈՒՄԲ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, հիմք ընդունելով Եղեգիս համայնքի ավագանու 24/10/2019 թվականի թիվ 72Ն, 24/01/2020թ. թիվ 11Ա որոշումը, Եղեգիս համայնքի ավագանու 31/08/2018թ . թիվ 57Ա որոշմամբ ստեղծված հանձնաժողովի եզրակացությունը, ***ավագանին որոշում է՝***

Տալ համաձայնություն սույն որոշման կից հավելվածներով ներկայացված Եղեգիս համայնքի բնակիչներին տրամադրելու ֆինանսական օգնություն:

Կողմ՝ 5 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Բադալյան Նվեր բացակա

Գևորգյան Արման բացակա

Հարությունյան Աշոտ բացակա

Հովհաննիսյան Ռուբիկ բացակա

Մարկոսյան Ռազմիկ

Մարտիրոսյան Զոյա

Մարտիրոսյան Նորայր

Մելիքսեթյան Վարդան

Մելքոնյան Արմենակ

Վարդանյան Մխիթար

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ [illegible]

Հավելված 1
22-ը դեկտեմբերի 2021թ.
N 100Ա ավագանու որոշման

Եղեգիս համայնքի հետևյալ բնակիչներին տրամադրել դրամական օգնություն, որպես սոցիալապես անապահով ընտանիքի՝

1. Հովսեփյան Միքայել Վարազդատի բն. Արտաբույնք 30 000 ՀՀ դրամ
2. Մնացականյան Բակուր Արիստակեսի բն.Արտաբույնք 50 000 ՀՀ դրամ
3. Մկրտչյան Մայրանուշ Խաչիկի բն. Արտաբույնք 30 000 ՀՀ դրամ
4. Մանուկյան Մանուկ Նարիբեկի բն. Շատին 30 000 ՀՀ դրամ
5. Նազարյան Մարջանիկ Շաշայի բն. Շատին 20 000 ՀՀ դրամ
6. Մարտիրոսյան Այսա Հայրիկի բն. Շատին 20 000 ՀՀ դրամ
7. Հայրապետյան Զվարթ Հակոբի բն.Շատին 20 000 ՀՀ դրամ
8. Գաբրիելյան Նատալի Սուրիկի բն. Շատին 20 000 ՀՀ դրամ
9. Հակոբյան Թելման Մամիկոնի բն. Շատին 25 000 ՀՀ դրամ
10. Մարտիրոսյան Զարինե Աշոտի բն. Շատին 25 000 ՀՀ դրամ
11. Գաբրիելյան Կորյուն Սուրիկի բն. Շատին 30 000 ՀՀ դրամ
12. Ստեփանյան Ստեփան Սամվելի բն. Հորբատեղ 30 000 ՀՀ դրամ
13. Միքայելյան Մարտիրոս Արմենակի բն. Հորբատեղ 25 000 ՀՀ դրամ
14. Սարդարյան Անդրանիկ Նորայրի բն. Աղնջաձոր 50 000 ՀՀ դրամ
15. Հարությունյան Վաչիկ Լևոնի բն. Քարագլուխ 20 000 ՀՀ դրամ

ԸՆԴԱՄԵՆԸ՝ 425 000 / չորս հարյուր քսանհինգ հազար / ՀՀ դրամ

Համայնքի ղեկավար՝ Արթուր Ստեփանյան

Հավելված 2
22-ը դեկտեմբերի 2021թ.
N 100Ա ավագանու որոշման

Եղեգիս համայնքի հետևյալ բնակիչներին տրամադրել դրամական օգնություն՝ յուրաքանչյուր նորածին երեխայի խնամքի համար 30 000-ական դրամ

1. Զաքարյան Լենա Տիգրանի բն. Շատին 30 000 ՀՀ դրամ
2. Հովհաննիսյան Արգիշտի Մոսիի բն. Շատին 30 000 ՀՀ դրամ
3. Բաբազյույան Համիկ Փայլակի բն. Շատին 30 000 ՀՀ դրամ
4. Սարգսյան Ռազմիկ Նվերի բն. Արտաբույնք 30 000 ՀՀ դրամ
5. Վարդանյան Նարեկ Արտյոմի բն. Արտաբույնք 30 000 ՀՀ դրամ
6. Հովհաննիսյան Ռոբերտ Քաջիկի բն. Արտաբույնք 30 000 ՀՀ դրամ
7. Զաքարյան Տանիա Կամոի բն. Աղնջաձոր 30 000 ՀՀ դրամ
8. Մնացականյան Ինա Գագիկի բն. Աղնջաձոր 30 000 ՀՀ դրամ
9. Հարությունյան Արսեն Վազգենի բն. Հերմոն 30 000 ՀՀ դրամ
10. Մխեյան Նաիրա Տիգրանի բն. Թառաթումբ 30 000 ՀՀ դրամ
11. Գալստյան Լաուրա Յուրիկի բն. Թառաթումբ 30 000 ՀՀ դրամ
12. Խաչատրյան Արթուր Սասունի բն. Քարագլուխ 30 000 ՀՀ դրամ
13. Ոսկանյան Դավիթ Արմենի բն. Վարդահովիտ 30 000 ՀՀ դրամ
14. Ավետիսյան Խաչատուր Արսենի բն. Սալլի 30 000 ՀՀ դրամ
15. Սմբատյան Դավիթ Նաիրիի բն. Եղեգիս 30 000 ՀՀ դրամ

Ընդամենը՝ 450 000 / չորս հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ

Համայնքի ղեկավար Ա.Ստեփանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

# *ՈՐՈՇՈՒՄ*

22-ը դեկտեմբերի 2021 թվականի N 101 Ն

## *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-14-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի պահանջներով, <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 1) կետի պահանջներով, և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի N1477-Ն որոշման պահանջները, ***ավագանին որոշում է՝***

1.Սահմանել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի 2022 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

Կողմ՝ 6 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Բադալյան Նվեր

Գևորգյան Արման

Հարությունյան Աշոտ

Հովհաննիսյան Ռուբիկ

Մարկոսյան Ռազմիկ

Մարտիրոսյան Զոյա

Մարտիրոսյան Նորայր

Մելիքսեթյան Վարդան

Մելքոնյան Արմենակ

Վարդանյան Մհերան

Հավելված
Եղեգիս համայնքի ավագանու
2021 թ. դեկտեմբերի 22-ի թիվ 101 Ն որոշման

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

### ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի,շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

ա) հիմնական շենքերի և շինությունների համար

- մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում ՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ **15000 դրամ:**

բ) Սույն կետի, <<ա>> ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 30 000 դրամ,

- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50000 դրամ,

- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50000 դրամ,

- 3000-ից և ավել քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 100000 դրամ:

գ) ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքների և շինությունների համար՝ 3000 դրամ,

- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 5000 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ 3000 դրամ:

բ) բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, և բացի սույն կետի <<ա>> ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով,

գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար՝ 5000 դրամ:

4. Համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **200000** դրամ:

5. Համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ 60000 դրամ:

6. համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **1200** դրամ,

- 26-ից մինչև 50

հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ ՝ 10100 դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ շինությունների դեպքում՝ 13100 դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 20100 դրամ,

-200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 25100 դրամ,

-500 և ավել քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 45100 դրամ,

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **1200** դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10100 դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13100 դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 20100 դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 25100 դրամ,

- 500 և ավել քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 45100 դրամ,

7. իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում <<Առևտրի և ծառայությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ 350դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար:

8. Համայնքի տարածքում՝ յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

ա)ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2000 դրամ.

բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս)

գ) այլ արտաքին գովազդի համար՝ 1500 դրամ.

դ) դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25%-ի չափով:

9. Համայնքի խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ ***100000*** դրամ:

ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ

1.Համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու,շինարարության ավարտական ակտի ձևակերպման համար,ինչպես նաև շահագործման թույլտվություն տրամադրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար **2500 /երկու հազար հինգ հարյուր/ ՀՀ** դրամ:

2.Համայնքում անցկացվող աճուրդներ և մրցույթներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար **10000 /տասը հազար/** դրամ:

3. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է **500 /հինգ հարյուր/ ՀՀ** դրամ:

4.Բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում կոշտ, կենցաղային թափոնների համար աղբահանության վճարը սահմանվում է.

ա/ ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական **100 /մեկ հարյուր/** դրամ, կամ

բ/ ըստ բնակելի շինության կամ բնակարանի ընդհանուր մակերեսի՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ **20** ՀՀ դրամ:

գ/ Համայնքում առկա ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում, այդ թվում՝ հասարակական, հանրային, ծառայությունների մատուցման, արտադրական, արդյունաբերական շենքերում և (կամ) շինություններում աղբահանության վճարը սահմանվում է ըստ շինության ընդհանուր մակերեսի հետևյալ դրույքաչափերով.

դ/Առևտրի, հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ իրականացնող շինությունների [illegible]

ՀՀ դրամ:

ե/Հյուրանոցների և հյուրանոցային տնտեսության ծառայություններ, ինչպես նաև այլ գործունեություն իրականացնող հասարակական շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար **30/երեսուն/** ՀՀ դրամ:

զ/Վարչակառավարչական, ֆինանսական, կապի, ինչպես նաև առողջապահության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ **20/ քսան/** Հայաստանի Հանրապետության դրամ.

է/Արտադրական՝ արդյունաբերական և գյուղատնտեսական նշանակության շենքերի և շինությունների մասով (այդ թվում՝ ավտոկայանատեղի)՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար **10/տաս/** ՀՀ դրամ:

ը/Գիտական, կրթական և ուսումնական նշանակության, սոցիալական ապահովության, մշակույթի, արվեստի, կրոնական, պաշտամունքային, քաղաքացիական պաշտպանության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ **10/դրամ/** ՀՀ դրամ,

թ/Շինություններում, որտեղ իրականացվում է մեկից ավելի առանձնացված տնտեսական գործունեություն, աղբահանության վճարն ամբողջությամբ հաշվարկել մեկ ամսվա համար **400/չորս հարյուր/** ՀՀ դրամ:

ժ/Շինություններում (այդ թվում՝ առանձնացված տնտեսական գործունեության համար նախատեսված շինությունների առանձին հատվածներում), որտեղ որևէ գործունեություն մշտապես կամ ժամանակավորապես չի իրականացվում, աղբահանության վճար չի հաշվարկվում, եթե շինությունում մշտապես կամ ժամանակավորապես որևէ գործունեություն չիրականացնելու վերաբերյալ աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձը դրա մասին տեղեկացնում է համայնքի ղեկավարին, իսկ համայնքի ղեկավարին չտեղեկացնելու դեպքում հաշվարկվում է սույն մասի 1-5-րդ կետերով սահմանված դրույքաչափով:

ի/Շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, ծառայությունների մատուցման վայրերի մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ **50/հիսուն/** Հայաստանի Հանրապետության դրամ:

5.Խմելու ջրի վարձավճարի չափը սահմանել ամսական 300 դրամ՝ ըստ տնտեսությունների:

6. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի վարչական տարածքում գտնվող համայնքային արոտներից օգտվելու վճարի չափը սահմանել տվյալ արոտավայրի տակ գտնվող հողամասի հողի

հարկի դրույքաչափին համապատասխան:

7.Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի վարչական տարածքում գտնվող համայնքային խոտհարքներից օգտվելու վճարի չափը սահմանել տվյալ խոտհարքի տակ գտնվող հողամասի հողի հարկի դրույքաչափին համապատասխան:

8. Համայնքի անասնաբույժի կողմից մատուցվող անասնաբուժական ծառայությունների վճար սահմանվում է՝

Ծննդօգնություն

1/Թեթև միջամտություն՝ 1000/մեկ հազար/ դրամ,

2/Ծանր միջամտություն 2000/երկու հազար/ դրամ:

9.Վարակիչ հիվանդությունների նկատմամբ կենդանիների իմունականխարգելիչ պատվաստումներ և արյունառում կամ այլ նմուշառում՝ կախված կենդանու տեսակից (բացառությամբ՝ «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում»ը՝ պետական ծրագրում ընդգրկված Հակաանասնահամաճարակային միջոցառումներ)՝

1/Մանր կենդանի 50/հիսուն/ դրամ,

2/Խոշոր կենդանի 100 /մեկ հարյուր/ դրամ:

10.Կենդանիների արտաքին և ներքին մակաբույծների դեմ պայքար՝ 500 /հինգ հարյուր/ դրամ

11. Ախտահանություն՝ 1 քառ. մետր 150 /մեկ հարյուր հիսուն/ դրամ:

12. Միջատազերծում (դիզինֆեկցիա)՝ 1 քառ. մետր 150 /մեկ հարյուր հիսուն/ դրամ:

13. Կրծողների դեմ պայքար (դեռատիզացիա)՝ 1 քառ. մետր 200 /երկու հարյուր/ դրամ:

14. Արհեստական սերմնավորում խոշոր եղջերավոր, խոզեր՝ 6000 /վեց հազար/ դրամ:

Համայնքի ղեկավար Արթուր Ստեփանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

## ***Ո Ր Ո Շ ՈՒ Մ***

22-ը դեկտեմբերի 2021 թվականի N 102 Ա

## ***ԱՎԱԳԱՆՈՒ 14/10/2021 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 89Ա ՈՐՈՇՄԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով, ***ավագանին որոշում է՝***

Եղեգիս համայնքի ավագանու 2021 թվականի հոկտեմբերի 14-ի «Եղեգիս համայնքի Վարդահովիտ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողատեսքերից մրցութային կարգով վարձակալության տրամադրելու մասին» թիվ 89Ա որոշման բովանդակության մեջ «Մեկնարկային գին սահմանել զուտ եկամտի 110 /մեկ հարյուր տաս/ տոկոսը» թիվը և բառերը փոխարինել «Մեկնարկային գին սահմանել կադաստրային արժեքի 70 /յոթանասուն/ տոկոսը» թվով և բառերով:

Կողմ՝ 6 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Բադալյան Նվեր կողմ

Գևորգյան Արման կողմ

Հարությունյան Աշոտ կողմ

Հովհաննիսյան Ռուբիկ կողմ

Մարկոսյան Ռազմիկ

Մարտիրոսյան Զոյա

Մարտիրոսյան Նորայր

Մելիքսեթյան Վարդան

Մելքոնյան Արմենակ

Վարդանյան Մխիթար

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ [illegible]

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

# *ՈՐՈՇՈՒՄ*

22-ը դեկտեմբերի 2021 թվականի N 103 Ա

## «ՎԱՅՐԻ ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»-Ի՝ ԱՐՋԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՍՑՎԱԾ ՎՆԱՍԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՆՁԱՆՑ ԱՆՎԱՆԱՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ, 7-րդ կետերով, հիմք ընդունելով Եղեգիս համայնքի ավագանու 24/10/2019 թվականի թիվ 72Ն, 24/01/2020թ. թիվ 11Ա որոշումը, Եղեգիս համայնքի ավագանու 31/08/2018թ. թիվ 57Ա որոշմամբ ստեղծված հանձնաժողովի եզրակացությունը,

***ավագանին որոշում է՝***

Եղեգիսի համայնքապետարանին «Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամ»-ի կողմից որպես նվիրատվություն տրված 1 453 000 /մեկ միլիոն չորս հարյուր հիսուներեք հազար/ ՀՀ դրամը հատկացնել Եղեգիս համայնք 10.7-1-51 – սոցիալական օգնություն ոլորտի - 4729 հոդվածին, և արջերի կողմից հասցված վնասի փոխհատուցման նպատակով սույն որոշման կից հավելվածով ներկայացված Եղեգիս համայնքի բնակիչներին տրամադրել ֆինանսական օգնություն:

Կողմ՝ 6 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Բադալյան Նվեր
Գևորգյան Արման
Հարությունյան Աշոտ
Հովհաննիսյան Ռուբիկ
Մարկոսյան Ռազմիկ
Մարտիրոսյան Զոյա
Մարտիրոսյան Նորայր

Կողմ՝ 6 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Մելքոնյան Արմենակ

Վարդանյան Մխիթար

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Հավելված
22-ը դեկտեմբերի 2021թ.
N 103Ա ավագանու որոշման

Եղեգիս համայնքի հետևյալ բնակիչներին տրամադրել դրամական օգնություն 2020 թվականի հունվարի մեկից սեպտեմբերի 20-ը ընկած ժամանակահատվածում արջի կողմից հասցված վնասների համար՝ յուրաքանչյուր անասնագլխի հաշվարկով

| | | |
|---|---|---|
| 1. | Գալստյան Լյուդմիլա Սերգեյի, բն. Հերմոն | 78 000 ՀՀ դրամ |
| 2. | Դանիելյան Ռաֆիկ Տարոնի, բն. Վարդահովիտ | 123 000 ՀՀ դրամ |
| 3. | Ալքամյան Սիմոն Սերոժի, բն. Եղեգիս | 93 000 ՀՀ դրամ |
| 4. | Զոհրաբյան Մհեր Գարեգինի, բն. Եղեգիս | 111 000 ՀՀ դրամ |
| 5. | Զոհրաբյան Մհեր Գարեգինի, բն. Եղեգիս | 123 000 ՀՀ դրամ |
| 6. | Զոհրաբյան Մհեր Գարեգինի, բն. Եղեգիս | 93 000 ՀՀ դրամ |
| 7. | Ղազարյան Սուրեն Լյովայի, բն. Եղեգիս | 105 000 ՀՀ դրամ |
| 8. | Ղազարյան Սուրեն Լյովայի, բն. Եղեգիս | 120 000 ՀՀ դրամ |
| 9. | Սմբատյան Շահեն Հրաչիկի, բն. Հորբատեղ | 129 000 ՀՀ դրամ |
| 10. | Ավանեսյան Արազ Ռոբիկի, բն. Հերմոն | 123 000 ՀՀ դրամ |
| 11. | Հակոբյան Էրզրիկ Վաչեի, բն. Արտաբույնք | 103 000 ՀՀ դրամ |
| 12. | Թադևոսյան Կամո Վարազդատի, բն. Արտաբույնք | 89 000 ՀՀ դրամ |
| 13. | Զաքարյան Սևակ Սարգսի, բն. Եղեգիս | 99 000 ՀՀ դրամ |
| 14. | Ղազարյան Մերուժան Սուրենի, բն. Վարդահովիտ | 111 000 ՀՀ դրամ |

ԸՆԴԱՄԵՆԸ՝ 1 500 000 /մեկ միլիոն հինգ հարյուր հազար / ՀՀ դրամ

Համայնքի ղեկավար Ա. Ստեփանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

# *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

22-ը դեկտեմբերի 2021 թվականի N 104 Ն

## *29-Ը ՀՈՒՆՎԱՐԻ 2021ԹՎԱԿԱՆԻ «ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 02Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներով և «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

**ավագանին որոշում է՝**

**Հաստատել Եղեգիս** համայնքի 29 հունվարի 2021թվականի ,,Տարեկան **բյուջեն հաստատելու մասին,,** թիվ 02Ն որոշման մեջ կատարվող հետևյալ վերաբաշխումները՝

**1)Պակասեցնել**

**Բաժին6 խումբ 3**դաս 1 ծրագիր 60,ջրամատակարարում ոլորտից 5112 **շենքերի և շինությունների կառուցում** հոդվածից 2000.0 հազար /երկու միլիոն / **ՀՀ դրամ,**

**ավելացնել՝**

**1)բաժին 6խումբ 4**դաս 1, ծրագիր 52 փողոցների լուսավորում ոլորտիշենքերի և **շինությունների կառուցում** հոդվածին (հոդված 5112) 1700.0 հազար/ **մեկ միլիոն յոթ հարյուր հազար/ ՀՀ**դրամ, Եղեգիս համայնքում սուբվենցիոն
**ծրագրով իրականացվող** լուսավորության ցանցի շինարարության գումարի **պակասող մասի ֆինանսավորման** համար,

**2)բաժին 4 խումբ2**դաս 4, ծրագիր 51 ոռոգում ոլորտի շենքերի և շինությունների կառուցում հոդվածին (հոդված 5112) 300.0 հազար / երեք հարյուր հազար/ ՀՀ դրամ, Եղեգիս համայնքում սուբվենցիոն ծրագրով իրականացվող ոռոգման ցանցի շինարարության գումարի պակասող մասի ֆինանսավորման համար,

2)Պակասեցնել

բաժին 4խումբ 2դաս 1, ծրագիր 51 գյուղատնտեսություն ոլորտիայլ կապիտալ դրամաշնորհներ հոդվածից (հոդված 4657) 3000.0հազար /երեքմիլիոն / ՀՀ դրամ,

ավելացնել

1)բաժին 1 խումբ 1դաս 1 ծրագիր51, օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում ոլորտի աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներհոդվածին ( հոդված 4111) 3000.0 հազար/երեք միլիոն/ ՀՀդրամ ավելացված աշխատավարձերի պակասող մասի ֆինանսավորման համար:

3) Պակասեցնել

1)բաժին 1 խումբ 1 դաս 1
ծրագիր51, օրենսդիրևգործադիրմարմիններ, պետականկառավարումոլորտիտրանսպորտ այինսարքավորումներ հոդվածից(հոդված 5121) 102.0 հազար(մեկ հարյուր երկու հազար)ՀՀ դրամ,
ավելացնել
1)բաժին 1 խումբ 1 դաս 1 ծրագիր51, օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում ոլորտի վարչական սարքավորումներ հոդվածին ( հոդված 5122) 102.0 հազար/մեկ հարյուր երկու հազար/ ՀՀ դրամ ՄԱԶԾ- ՅՈՒՆԻՍԵՖ ծրագրով տրամադրած գումարի օգտագործման նպատակով:

Կողմ՝ 5 Դեմ՝ 1 Ձեռնպահ՝ 0

Բադալյան Նվեր բացական

Գևորգյան Արման բացական

Հարությունյան Աշոտ բացական

Հովհաննիսյան Ռուբիկ բացական

Մարկոսյան Ռազմիկ

Մարտիրոսյան Զոյա

Մարտիրոսյան Նորայր

Մելիքսեթյան Վարդան

Մելքոնյան Արմենակ

Վարդանյան Մխիթար

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22-ը դեկտեմբերի 2021 թվականի N 105 Ա

## ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՐՄՈՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի հունվարի 17-ի թիվ 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> թիվ 1918-Ն որոշումն և հաշվի առնելով Եղեգիս համայնքի ղեկավարի առաջարկությունը, ***ավագանին որոշում է՝***

1.Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Վայոց ձոր մարզի Եղեգիս համայնքի Հերմոն բնակավայրի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում նախատեսվող փոփոխությանը, ըստ որի նախատեսվում է՝ Հերմոն բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության՝

- 2.13617հա մակերեսով արոտավայր հողատեսքը /կադաստրային ծածկագիր՝ 10-029-0102- / փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության, գործառնական նշանակությունը բնակելի կառուցապատման:
- 0.93601 հա մակերեսով արոտավայր հողատեսքը /կադաստրային ծածկագիր՝ 10-029-0102- / փոխադրել հատուկ պահպանվող տարածքների նպատակային նշանակության, գործառնական նշանակությունը պատմական և մշակութային:

2.Համայնքի ղեկավարին՝ կազմել և հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի համաձայնեցմանը ներկայացնել համապատասխան հողաշինական գործը:

Կողմ՝ 5 Դեմ՝ 1 Ձեռնպահ՝ 0

Բադալյան Նվեր

Գևորգյան Սոսան

Կողմ՝ 5 Դեմ՝ 1 Ձեռնպահ՝ 0

Հարությունյան Աշոտ

Հովհաննիսյան Ռուբիկ

Մարկոսյան Ռազմիկ

Մարտիրոսյան Զոյա

Մարտիրոսյան Նորայր

Մելիքսեթյան Վարդան

Մելքոնյան Արմենակ

Վարդանյան Մխիթար

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

22-ը դեկտեմբերի 2021 թվականի N 106 Ա

## ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՐՄՈՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 3-րդ հոդվածի 1-ին, 7-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 29.12.2011թ. թիվ 1918-Ն «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Կառավարության 17.01.2001թ. թիվ 30-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» որոշման 13-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի» 02/11/2021թ. թիվ 221 դրական եզրակացությունը, ***ավագանին որոշում է՝***

Հայաստանի Հանրապետության Վայոց ձոր մարզի Եղեգիս համայնքի Վարդահովիտ բնակավայրի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում Վարդահովիտ բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 1.26հա արոտ հողամասը /կադաստրային ծածկագիր՝ 10-041-0201-0221/ փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերնպատակայիննշանակության, գործառնական նշանակությունը արդյունաբերական օբյեկտների՝ արտադրական շինություններ կառուցելու համար:

Կողմ՝ 5 Դեմ՝ 1 Ձեռնպահ՝ 0

Բադալյան Նվեր

Գևորգյան Արման

Հարությունյան Աշոտ

Հովհաննիսյան Ռուբիկ

Մարկոսյան Ռազմիկ

Կողմ՝ 5 Դեմ՝ 1 Ձեռնպահ՝ 0

Մարտիրոսյան Զոյա

Մարտիրոսյան Նորայր

Մելիքսեթյան Վարդան

Մելքոնյան Արմենակ

Վարդանյան Մխիթար

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22-ը դեկտեմբերի 2021 թվականի N 107 Ա

### ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱԲՈՒՅՆՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0,06 ՀԱ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀՈՂԵՐ, ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի գ) ենթակետով, 22-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, ***ավագանին որոշում է՝***

1.Տալ համաձայնություն Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի Արտաբույնք բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր, գործառնական նշանակությունը գյուղատնտեսական արտադրական օբյեկտների ստորև ներկայացված հողատեսքերը աճուրդով օտարելու վերաբերյալ

- կադաստրային ծածկագիր՝ 10-010-0120-0044, մակերեսը՝ 0.03 հա,
- կադաստրային ծածկագիր՝ 10-010-0120-0045, մակերեսը՝ 0.03 հա:

2.Մեկնարկային գին սահմանել կադաստրային արժեքի 150%-ի չափով:
3. Տալ հայտարարություն Հայաստանի Հանրապետություն օրաթերթում:

Կողմ՝ 5 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 1

Բաղալյան Նվեր կողմ

Գևորգյան Արման կողմ

Հարությունյան Աշոտ կողմ

Կողմ՝ 5 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 1

Հովհաննիսյան Ռուբիկ

Մարկոսյան Ռազմիկ

Մարտիրոսյան Զոյա

Մարտիրոսյան Նորայր

Մելիքսեթյան Վարդան

Մելքոնյան Արմենակ

Վարդանյան Մխիթար

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

22-ը դեկտեմբերի 2021 թվականի N 108 Ա

### ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՂԵԳԻՍ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի հունվարի 17-ի թիվ 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> թիվ 1918-Ն որոշումն և հաշվի առնելով Եղեգիս համայնքի ղեկավարի առաջարկությունը, ***ավագանին որոշում է՝***

1.Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Վայոց ձոր մարզի Եղեգիս համայնքի Եղեգիս բնակավայրի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում նախատեսվող փոփոխությանը, ըստ որի նախատեսվում է՝ Եղեգիս բնակավայրի վարչական տարածքում գտնվող քաղաքացի Էդիկ Թևոսի Սաֆարյանի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքից /1,024հա մակերեսով, 10-021-0105-0030 կադաստրային ծածկագրով/ առանձնացված 0.05հա տարածքը փոխադրել բնակավայրերի նշանակության հողերի կատեգորիա, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման /հյուրատուն կառուցելու համար/:

2. Համայնքի ղեկավարին՝ կազմել և հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի համաձայնեցմանը ներկայացնել համապատասխան հողաշինական գործը:

Կողմ՝ 5 Դեմ՝ 1 Ձեռնպահ՝ 0

Բադալյան Նվեր *բացակա*

Գևորգյան Արման *բացակա*

Հարությունյան Աշոտ *բացակա*

Կողմ՝ 5 Դեմ՝ 1 Ձեռնպահ՝ 0

Հովհաննիսյան Ռուբիկ բացակա

Մարկոսյան Ռազմիկ

Մարտիրոսյան Զոյա

Մարտիրոսյան Նորայր

Մելիքսեթյան Վարդան

Մելքոնյան Արմենակ

Վարդանյան Մխիթար

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

# *ՈՐՈՇՈՒՄ*

22-ը դեկտեմբերի 2021 թվականի N 109 Ա

## *ԱՎԱԳԱՆՈՒ 14/10/2021 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 92Ա ՈՐՈՇՄԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով, ***ավագանին որոշում է՝***

Եղեգիս համայնքի ավագանու 2021 թվականի հոկտեմբերի 14-ի «Սերվիտուտի պայմանագրեր կնքելու մասին» թիվ 92Ա որոշման բովանդակության մեջ՝

ա/«45 000 /քառասունհինգ հազար/» թիվը և բառերը փոխարինել «52 000/հիսուներկու հազար/» թվով և բառերով,

բ/«40 000 /քառասուն հազար/» թիվը և բառերը փոխարինել «33 000 /երեսուներեք հազար/» թվով և բառերով:

Կողմ՝ 5 Դեմ՝ 1 Ձեռնպահ՝ 0

Բադալյան Նվեր բացակա

Գևորգյան Արման բացակա

Հարությունյան Աշոտ բացակա

Հովհաննիսյան Ռուբիկ բացակա

Մարկոսյան Ռազմիկ

Մարտիրոսյան Զոյա

Մարտիրոսյան Նորայր

Մելիքսեթյան Վարդան

Մելքոնյան Արմենակ

Վարդանյան Միքայել

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

## *Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

22-ը դեկտեմբերի 2021 թվականի N 110 Ա

## *ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՑՈՒՑԱԿՆԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և 77-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով, հիմք ընդունելով Եղեգիս համայնքի ղեկավարի 13/12/2021թ. թիվ 272Ա որոշումը, **ավագանին որոշում է՝**

Ստորև ներկայացված գույքը գույքագրել Եղեգիսի համայնքապետարանի գույքային հաշվեկշռում՝

| հ/հ | Ապրանքի անվանումը | քանակ, հատ | Սերիա | Միավորի գինը, ՀՀ դրամ /ներառյալ բոլոր հարկերը և տրանսպորտային ծախսերը/ | գին, ՀՀ դրամ |
|---|---|---|---|---|---|
| 1 | հակակարկտային կայան | 7 | 38121300 | 1900000 | 13300000 |
| 2 | Արևային կայան | 17 | - | 440250 | 752 250 |
| 3 | էլեկտրական հովիվ | 1 | SDC-5800 | 489 750 | 489 750 |

Կողմ՝ 5 Դեմ՝ 1 Ձեռնպահ՝ 0

Բադալյան Նվեր

Գևորգյան Արման

Հարությունյան Աշոտ

Հովհաննիսյան Ռուբիկ

Մարկոսյան Ռազմիկ

Կողմ՝ 5 Դեմ՝ 1 Ձեռնպահ՝ 0

Մարտիրոսյան Նորայր

Մելիքսեթյան Վարդան

Մելքոնյան Արմենակ

Վարդանյան Մխիթար

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22-ը դեկտեմբերի 2021 թվականի N 111 Ա

## ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՐՄՈՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻՑ «ՄԽԻԹԱՐ ՍԵԲԱՍՏԱՑԻ» ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ ՊՈԱԿ-ԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԱՆՀԱՏՈՒՑ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 29/04/2004թ. N636-Ն որոշումն ու համայնքի ղեկավարի առաջարկությունը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի և Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի պահանջներով, ***ավագանին որոշում է՝***

1.Թույլատրել Վայոց ձոր մարզի Եղեգիս համայնքի Հերմոն բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողատեսքերից ''Մխիթար Սեբաստացի'' կրթահամալիր ՊՈԱԿ-ին համայնքի սեփականության իրավունքը անհատույց փոխանցել ստորև ներկայացված գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ՝

1/կադաստրային ծածկագիր՝ 10-029-0135-0010, մակերեսը՝ 34.70947 հա, գործառնական նշանակությունը՝ արոտավայր,
2/կադաստրային ծածկագիր՝ 10-029-0102-0047, մակերեսը՝ 110.65982 հա, գործառնական նշանակությունը՝ արոտավայր,
3/կադաստրային ծածկագիր՝ 10-029-0135-0012, մակերեսը՝ 0.42642 հա, գործառնական նշանակությունը՝ արոտավայր,
4/կադաստրային ծածկագիր՝ 10-029-0102-0045, մակերեսը՝ 1.39814 հա, գործառնական նշանակությունը՝ արոտավայր,
5/կադաստրային ծածկագիր՝ 10-029-0102-0041, մակերեսը՝ 4.4358 հա, գործառնական նշանակությունը՝ արոտավայր /3.94731հա/, վարելահող /0.44297հա/, խոտհարք /0.04552հա/,
6/կադաստրային ծածկագիր՝ 10-029-0102-0043, մակերեսը՝ 15.23745 հա, գործառնական նշանակությունը՝ արոտավայր /14.5196հա, վարելահող /0.71785հա/,
7/կադաստրային ծածկագիր՝ 10-029-0102-0044, մակերեսը՝ 14.82744 հա, գործառնական

նշանակությունը՝ արոտավայր /11.19435հա/, խոտհարք /2.02609հա/, վարելահող /1.607հա/,
8/կադաստրային ծածկագիր՝ 10-029-0102-0042, մակերեսը՝ 5.77732 հա, գործառնական նշանակությունը՝ արոտավայր:

Կողմ՝ 5 Դեմ՝ 1 Ձեռնպահ՝ 0

Բադալյան Նվեր բացակա

Գևորգյան Արման բացակա

Հարությունյան Աշոտ բացակա

Հովհաննիսյան Ռուբիկ բացակա

Մարկոսյան Ռազմիկ

Մարտիրոսյան Զոյա

Մարտիրոսյան Նորայր

Մելիքսեթյան Վարդան

Մելքոնյան Արմենակ

Վարդանյան Մխիթար

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ